

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2007թ. N 1565 –Ն

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2007թ. դեկտեմբերի 29

Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության  
2007 թվականի դեկտեմբերի 27-ի  
N 1565-Ն որոշման

#### ԿԱՐԳ

#### ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառումը՝ օգոնային շերտը քայքայող նյութերի քանակական և որակական ցուցանիշների, ինչպես նաև դրանց ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման հետ կապված գործաքների մասին տեղեկատվության անընդհատ փաստաթղթային արտացոլման համակարգ է, որը ներառում է դրանց սույն կարգի 5-րդ կետով սահմանված տվյաների գրանցումը օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման գրքում (այսուհետ՝ հաշվառման գիրք) և փաստաթղթերի պահումը՝ դրանց համար առանձնացված թղթապանակում:

3. Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառումն (այսուհետ՝ հաշվառում) իրականացնում են՝

1) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր պետական մարմին)՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված տվյալներն ու փաստաթղթերը հաշվառման գրքում գրառելու միջոցով, որի ձևը հաստատում է լիազոր պետական մարմնի դեկավարը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր մաքսային պետական կոմիտեի տարածքային մարմինները (այսուհետ՝ մաքսային մարմիններ) սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված տվյալներն ու փաստաթղթերը հաշվառման գրքում գրառելու միջոցով, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր մաքսային պետական կոմիտեի դեկավարը:

4. Հաշվառման գրքերը համապատասխանաբար պետք է պարունակեն սույն կարգի 5-րդ կետով սահմանված տվյալները, և մինչև գրառումներ կատարելը դրանց էջերը պետք է լինեն համարակալված ու կարված, ինչպես նաև հաշվառման գիրքը պետք է ստորագրված ու կնքված լինի՝ սույն կարգի 3-րդ կետով սահմանված համապատասխան դեկավար անձի կողմից:

Հաշվառման գրքերն ու համապատասխան փաստաթղթերը պահպում են 5 տարի ժամկետով։

5. Լիազոր պետական մարմինը հաշվառում է օգոնային շերտը քայլայող նյութերի՝

1) Աերմուծման համար Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ տվյալ տարվա համար ըստ առանձին նյութերի սահմանված ընդհանուր չափաքանակները, տվյալ նյութի միջազգային տեխնիկական անվանումը, նյութի քիմիական անվանումն ու խումբը, նյութի քիմիական բանաձևը, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) ծածկագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումը,

2) Աերմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվություն ստանալու մասին հայտը, հայտատուի տվյալները, խնդրարկվող օգոնային շերտը քայլայող նյութի (նյութերի) անվանումն ու քանակությունը,

3) Աերմուծման անհատական չափաքանակ ստացողի տվյալները, սահմանված անհատական չափաքանակները և դրանց մնացորդային քանակությունները՝ ըստ առանձին նյութերի անվանումների ու խմբերի, դրանց Աերմուծման համար սահմանված ժամանակահատվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 17-ի N 591-Ն որոշման համաձայն ընդունված օգոնային շերտը քայլայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն Աերմուծման անհատական չափաքանակի մասին որոշումները,

4) Օգոնային շերտը քայլայող նյութերի առաքման՝ Աերմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվությունը, թույլտվության համարը, թույլտվություն ստացող իրավաբանական կամ ֆիզիկական անձի տվյալները, թույլատրված օգոնային շերտը քայլայող նյութի (նյութերի) անվանումն ու քանակությունը, Աերմուծման դեպքում՝ արտահանող երկրի և Աերմուծման մաքսային ձևակերպումներն իրականացրած մաքսային մարմնի անվանումներն ու Աերմուծման ամսաթիվը, արտահանման դեպքում՝ Աերմուծող երկրի և արտահանման մաքսային ձևակերպումներն իրականացրած մաքսային մարմնի անվանումներն ու ամսաթիվը, տարանցիկ փոխադրման դեպքում՝ մուտքի և ելքի մաքսային մարմինների անվանումներն ու ամսաթիվը,

5) «Օգոնային շերտը քայլայող նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Աերկայացված Աերմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն), հաշվետվություն Աերկայացնողի տվյալները և հաշվետվության ստացման ամսաթիվը, ինչպես նաև հաշվետվությունում Աերառված տվյալները՝ ըստ

նյութերի անվանումների, օգտագործման տեսակի ու քանակության՝ ներառյալ մնացորդային քանակության և օգտագործման ժամանակահատվածը կամ ամսաթիվը:

6. Օգոնային շերտը քայլայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման վերաբերյալ սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները մաքսային մարմինները լիազոր պետական մարմին են ներկայացնում մաքսային ձևակերպումների ավարտից հետո, մինչև հաջորդող ամսվա 25-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ